

# Մ Ա Ն Կ Ա Վ Ա Ր Թ Ա Կ Ա Ն

## Մ Ե Թ Ո Ւ Դ Ի Ա Ն Հ Ր Ա Թ Ե Շ Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ը Ո Ւ Ս Ո Ւ Յ Մ Ա Ն

### Ժ Ա Մ Ա Ն Ա Կ

Երբ մէկը ցանկանում է մի ուրիշին որ և է հարցի մասին բացատրութիւններ տալ, գործում է նա հոգեկան այդ աշխատանքի ժամանակ որոշ օրէնքներով, որոնք ընդհանուր են բոլորի համար, թէ՛ նա առաջնորդում է գլխաւորապէս իր բողոքական տրամադրութիւններով, անձնական քմահաճոյքով և առանձնաշատկութիւններով, որոնք միմիայն անհատական և եզակի արժէք ունին: Ընդիրը աւելի մասնաւոր ենք. ուսուցիչը դասաւանդման նիւթերի մշակման ժամանակ զեկալարւում է իր անձնական տրամադրութիւններով և իր անհատը գործունէութեան միակ չափանիշն է ընդունում, թէ՛ նա գիտակցօրէն կամ անգիտակցօրէն ենթարկւում է այնպիսի օրէնքների, որոնք ընդհանուր են բոլոր նոյն գործով զբաղուող անհատների համար: Այսինքն՝ կայ ուսուցման մի ձև կամ ձևեր, մեթոդ կամ մեթոդներ, որոնք պարտադիր լինին բոլորի համար: Այս հարցի պատասխանը միշտ էլ միատեսակ չէ եղել:

Պատմութեան մէջ եղել են և դեռ այժմ էլ կան անհատներ, թէև թուով շատ քիչ, որոնց կարծիքով գոյութիւն չունին ուսուցման ընդհանուր ձևեր կամ մեթոդներ. անհատները իրենց հոգեկան կազմով, եսի բովանդակութիւններով տարբեր են, ուստի և նրանց գործածած մեթոդները ևս բնականօրէն պիտի տարբեր լինին: Անհատն է մեթոդի չափը և ոչ թէ մեթոդն է որոշում անհատի դասաւանդչական գործունէութեան ձևերը: Հերզերը ասում է. «Ամեն մի ուսուցիչ պէտք է բանականութեամբ ստեղծած իր սեփական մեթոդն ունենայ, այլապէս նա բանի պէտք չէ»: Ուսուցիչը հիմնուելով իր բանական աշխատանքի վրայ կարող է պընդել, որ իր գործադրած մեթոդները ճիշտ են, եթէ նրանք նոյն իսկ դէմ լինին ժամանակի գիտութեան եզրակացութիւններին: Ամեն մի ուսուցիչ պէտք է իր սեփական մեթոդը ունենայ, իսկ սեփական մեթոդն ունենալու՝ իրաւունքը լայն դռներ է բացում սուբյեկտիւիզմի առաջ:

Ազատութիւնը և անկախութիւնը՝ հոգեկան աշխատանքի գրական արդիւնքների անհրաժեշտ պայմաններն են, ասում են սուբյեկտիւիստները: Ընշել ուսուցչի անհատականը, հարկադրել նրան

անհելու այն, ինչ չէ բղխում նրա ներքին կարիքներից, ցանկալի չէ երբէք: Պատմական յայտնի գործերը յառաջացել են անհատների ուրոյն եղանակով արտայայտուելու միջոցաւ: Ընդհանուրը, ամենօրեան, բոլորի կողմից ընդունածը ճնշում է մարդու ստեղծագործական ուժը, պրոպուկախութեան թուփը: Անհաւար աշխատում է ապրել իր ներսի կեանքը իր եսին յարմար ձևերով. առանձին օրէնքների գիտակցութիւնը խանգարում է հոգեկան կեանքի և աշխատանքի անմիջական արտայայտութիւնները: Պէտք է ուսուցչին թողնել, որ հաշիւ տեսնէ իր ներքին ձայնի, մութ տրամադրութիւնների, ինստինկտիւ մղումների հետ, որովհետև այդ ներքին անկեղծութիւնը աւելի բան անել կարող է, քան մեթոդիկոսների երկար տրակտատները: Ուսուցիչը լսելով իր ներքին կարիքներին կատեղծէ գործունէութեան մի ուրոյն և անկախ եղանակ:

Այս կարծիքի պաշտպանները ամենայն հեշտութեամբ միանում են այն ուղղութեան ներկայացուցիչների հետ, որոնք ուսուցչի աշխատանքը համարում են գեղարուեստական գործ: Ուսուցիչը գեղարուեստագէտ է. նա տաք, զգայուն սրտով մօտեցնում է երեխային կուլտուրական մեծ արժէքներին, հասկանալի է դարձնում այդ բոլորը և տեղադրում նրան այդ մեծ սիստեմի մէջ և դրանով երեխայի հոգու մէջ մի ամբողջական կերտուածք պատրաստում:

Ուսուցչի աշխատանքի գլխաւոր յատկութիւնը կոմպոզիցիան է. նա իր հոգու առաջ պատկերացնում է իր առարկայի նիւթերի ամբողջութիւնը, նրա մասերը և այդ մասերի յարաբերութիւնները, ամեն մի մաս իր տեղն ու նշանակութիւնն է ստանում այդ ամբողջութեան մէջ: Բացի այդ մէկ ուսուցչի աշխատանքը միանում, մերուում է միւս ուսուցիչների աշխատանքների հետ, որով ստեղծւում են աւելի լայն, մեծ և բազմանդամ և մասերը իրար հետ ներդաշնակօրէն միացած սիստեմներ: Ուսուցիչը այս բոլորը իր հոգու մէջ պարզ պատկերացնելուց յետոյ, պարտաւոր է այնուհետև հաշուի առնել նաև այն հարցը, թէ այդ նիւթերը և ամբողջութիւնները ինչպէս են յարաբերում երեխայի հոգեբանութեանը: Աշակերտի հոգին չի կարող հեշտութեամբ ամեն մի տեսակի նիւթ իր մէջ վերցնել, ուսուցիչը պէտք է վարպետօրէն ներդաշնակէ նիւթի և հոգու առանձնայատկութիւնները: Այստեղ ևս ինդիւիդուալ կոմպոզիցիաներ:

Ամեն մի ուսուցում Բզգայական-գիտողական, միտքը մշակող, զգացումները կրթող և կամքը մարդող կողմեր ունի. այս կողմերի մէջ ներդաշնակութիւն է մտցնում ուսուցիչը. այս բոլոր կողմերը ի մի է հաւաքում, նիւթերի մշակման ժամանակ

շեշտում է մէկ կամ միւս կողմը աւելի և այնպէս է անում, որ բոլորն էլ մէկը միւսից բղխեն և աշակերտի հոգին բոլոր կողմերի համար էլ զգայուն պահանջ: Ուսուցիչը նմանում է արձանագործի, տարբերութիւնն այն է, որ վերջինս կանգնած է մի անշունչ, անկամք, ենթարկուող գոյութեան առաջ, այն ինչ ուսուցիչը հարկադրուած է կերտելու մի շնչաւոր, կամքով և ժառանգականութեամբ օժտուած անհատի, որը հեշտութեամբ չէ ենթարկուում որոշ գրգիռների և ազդումների: Սակայն ուսուցիչն էլ արձանագործի պէս որոշ ներդաշնակ ծրագրով ձեռնկերպում է իր զբաղման առարկան. կազմակերպում է նիւթեր և նրանց ներդաշնակ յարաբերումները, աշխատում է մարդու հոգեկան ուժերը որոշ աստիճաններով և որոշ ձևերով զարգացնել, սակայն այնպէս, որ նրանք համաչափ ու ներդաշնակ զարգանան:

Շատերը այս գրութիւնից կզրակացնում են, ուսուցիչը այնպէս պէտք է գործէ, ինչպէս գեղարուեստագէտը: Վերջինս գործում է իր մուսայի, մոմենտի ազդեցութեան տակ և ոգևորութեան վայրկեաններում և ներքին մղումների, մութ տրամադրութիւնների միջոցաւ: Ընդհանրապէս չի ձանաչում օրէնքներ, շարժումներ և մանրամասն կանխամտածուած ծրագիր. նրա գործը հոգու մի ամբողջական, անմիջական և ուղղակի վիժուածք է: Ուսուցիչի աշխատանքը ևս պէտք է նմանուէ գեղարուեստագէտին. նրա գործը բոպէի, տրամադրութեան, կամքի ազատ մղումների ազդեցութեան տակ պէտք է ծնէ:

Այսպէս մտածողների կարծիքով ուսուցանելու համար բաւական է երկու բան՝ սէր դէպի գործը և աշակերտը և գիտական պատրաստութիւն: Կեանքում շատ ենք հանդիպում այսպիսի մտածողների. գործի սէրը համարում է խնդրի լուծման միակ միջոցը: Սէրը բնազդօրէն տանում է ուսուցչին դէպի ուղիղ ձանապարհներ. սիրած անձնաւորութեանը օգտակար լինելու ազնիւ ցանկութիւնը մարդու մէջ ծնեցնում է սիրածի հետ վարուելու տանելի կղանակներ: Գիտութիւնը, մեթոդները, գիտակցական այլ և այլ դատողութիւնները ոչինչ են, եթէ գոյութիւն չունի կոչումի ճիշտ գիտակցութիւն և սէր դէպի աշակերտը: Այսպէս մտածողները իսկապէս ճիշտ տուեալից հանում են անճիշտ կզրակացութիւններ:

Ուղիղ չէ այն կարծիքը, իբր թէ գիտական պատրաստութիւնը, առարկային տիրապետելը բաւական է յաջող դասուանդելու համար: Այդ յատկութիւնը իսկապէս որ լաւ ուսուցանելու գլխաւոր պայմաններից մէկն է, սակայն միմիայն զբանով չի կարելի բաւականանալ: Փորձից էլ մեզ յայտնի է, թէ ինչպէս որոշ առարկաների մէջ լաւ մասնագէտները չեն կարողանում հետաքրքիր

եղանակով ուսուցանել, նոյնպէս հաստատուած կարելի է համարել այն կարծիքը, որ լաւ մասնագէտը երբ ծանօթանում է իր առարկայի մեթոդիկային վերաբերող հարցերին, կարողանում է սխուհետեմ իր աշակերտներին հոգեբանութեանը աւելի համապատասխան պարագել: Ուսուցման խնդրի մասին եղած ուսումնասիրութիւնները միշտ էլ նպաստաւոր ազդեցութիւն են թողել դպրոցական սլրակտիկայի վրայ:

Ինչպիսի հետեանքների կհասնենք, եթէ հետեելու լինինք վերոյիշեալ մտածողներին: Եթէ նոցա տեսակէտը ուսուցման աշտատանքի հիմք ընդունենք, այն դէպքում դպրոցը լայն գոնիւր է բանում անհատական ազատ տրամադրութիւնների և քմահաճոյքների առաջ: Անհատը կարող է պնդել իր սխալի վրայ տալով իր անձնական տրամադրութիւններին նորմերի արժէք: Այսպիսի պայմաններում հեշտութեամբ կարող է դպրոցը անբարեխիղճ վերաբերմունքների վայր դառնալ. նա՛ ով չի ընդունում ուսուցման ընդհանուր ձևեր, կարող է հեշտութեամբ իր պատահական մտածումներին և սովորութիւն դառնող դատապարտելի վարմունքներին զոհ գնալ: Գիտականութիւնը այն ժամանակ չէ ծաղկում, երբ ի նկատի ունինք մեր ներքին ձայնն ու անձնական տրամադրութիւնները, այլ երբ այդ մղումները հաշտեցնում ենք ուրիշների հոգեկան աշխատանքների հետ և որոնում աշխատանքի ընդհանուր նմանութիւններ: Այն ուսուցիչը, որը լրջօրէն չէ քննել իր աշխատանքի յատկութիւնները, պայմանները, արտայայտման ձևերը և այդ աշխատանքի որոշ մասերի բոլորին յատուկ լինելը, դեռ գտնուում է սուրբեկտիւ, երբուն գրութեան մէջ, իր աշխատանքին նա դեռ լուրջ բնաւորութիւն չի տուել: Մի աշխատանք գիտական է դառնում այն ժամանակ, երբ գիտակցելի է նրա էութեան ընդհանուր, օրբեկտիւ ձևերը:

Սկսնակ ուսուցիչների համար մանաւանդ վտանգաւոր է ամեն բան ուսուցչի անձին թողնելու սխտեմը: Սկսնակը նոր է դպրոց մտնում, նրան Հերդերի խօսքերով ասում են. «ամեն ուսուցիչ պէտք է իր մեթոդը ունենայ», ուրեմն և ինքը: Նա անհաստատ մօտենում է իր գործին. իր աշխատանքի ժամանակ չունի այնպիսի օրբեկտիւ սկզբունքներ, որոնք նրա համար հանգստի վայրեր լինէին: Սկսնակի համար որքան մեծ նշանակութիւն ունի այն գիտակցութիւնը, որ իր փորձելիք մեթոդները ոչ թէ իր տհաս և անփորձ մտքի քմահաճ որոշումներն են, այլ իր բնից աւելի գիտուն անհատների մտածողութեան և փորձերի արդիւնքները: Այս գիտակցութիւնը նրան վստահութիւն է տալիս իր աշխատանքի ժամանակ: Այդպէս աշխատել են և աշխատում են շատ — շատերը, այդպէս աշխատում է նաև ինքը. այսպիսով

աւելի են շատանում անցեալ և ներկայ աշխատանքի ընդհանուր նման կէտերը: Վստահութիւնը և հաւատը ուսուցչի աշխատանքի յաջողութեան էական գրաւականներն են:

Ոչ միայն սկսնակների, այլ և փորձուած ուսուցիչների համար ևս մեծ նշանակութիւն ունի գիտական աշխատանքների վրայ հիմնած օրյեկտիւ մեթոդը: Այս տեսակէտից շատ հետաքրքրական է Վ. Ջէմսի կարծիքը: Ուսուցիչների համար դրած հոգերանական մի աշխատութեան մէջ նկարագրում է, թէ ինչպէս հոգերանական իմացութիւնները չեն կարող շատ յաճախ օգտակար լինել մանկավարժութեան համար, թէ ինչպէս հոգերանութիւնը լաւ ուսումնասիրած մի անհատ դեռ չի նշանակում, թէ պէտք է լաւ դաս տայ: Բայց այս բոլորից յետոյ նա պնդում է, որ հոգերանութիւնը պէտքբական է մանկավարժութեան համար, որովհետև մանկավարժութեան պահանջները չպէտք է դէմ լինին հոգերանական տուեալներին և բացի այդ հոգերանութեան հետ յարմարուած մանկավարժական պահանջները ուսուցչին իր աշխատանքի մէջ աւելի վստահութիւն են տալիս: Ուսուցիչը տեսնում է, որ իր աշխատանքը պաշտպանութիւն է գտնում նաև մի այլ ոէալ գիտութեան կողմից, իսկ դրանով արդէն մանկավարժական պահանջները աւելի գիտական և օրյեկտիւ արժէք են ստանում: Միանգամայն ճիշտ է Ջէմսի այս կարծիքը: Փորձուած ուսուցչի համար ևս վստահութեան, անկասկածելիութեան մի առիթ է դառնում մանկավարժական ուսումնասիրութիւնների հիմնուելը ուրիշ գիտական դիսցիպլինայի վրայ:

Գիտական մշակումների վրայ հիմնուած մեթոդը կարող է ուրիշ դրական հետեանքներ ևս ունենալ: Նիւթերի իւրացումը և ուսումնասիրութիւնը ուսուցիչը այդ դէպքում աւելի լաւ է կատարում: Մեթոդը հարկադրում է նրան քննել, ուսումնասիրել նիւթի առանձնայատկութիւնները, յարմարեցնել մեթոդը նիւթին, ինչպէս և նիւթը մեթոդին: Իսկ այսպիսի ներդաշնակութիւն կարելի է մացնել միմիայն լուրջ զբաղումների միջոցաւ: Իր անձնական տրամադրութիւններով ղեկավարուող և մի օրյեկտիւ մեթոդ չընդունող ուսուցիչը զժուար թէ հնարաւորութիւն ունենայ դաս տալու համար որոշած նիւթի մշակման վրայ երկար աշխատելու:

Մի այլ տեսակէտից ևս կարգաւորեալ մեթոդի կարիքը անհրաժեշտ է դառնում: Երբ մարդ որոշում է որ և է փոքր ինչ բարդ աշխատանք կատարել, կազմում է նախ մի կարգաւորեալ ծրագիր և սպա աշխատանքի անցնում: Որքան մեծ հիասթափութիւնների պատճառ դառնալ կարող է այն հանգամանքը, որ մէկը մի որոշ գործ կատարելուց առաջ այդ գործի մասին կատարեալ ծրագիր

չէ ունեցել: Կարգաւորեալ ծրագիր կազմելիս մարդը աւելի բազմակողմանի է քննում գործի հանգամանքները, լաւն ու վատը, նպաստաւոր և աննպաստ կողմերը և այդ բոլորը հաշուի առնելով՝ ստեղծում է ապագայ արարքների համար մի ամբողջ սխտեմ: Այն մարդոց, որոնք այսպիսի սխտեմների հետ գործ չունին, անուանում ենք խմբուլսիւ, բոպէի ազդեցութեան տակ գործողներ: Կեանքը ցոյց է տալիս, որ այդպիսիները գոյութեան կռուի մէջ ամենայնջողները չեն:

Ինչպիսիք է տարբերում ուսուցիչը ծրագրներ կազմող գործունեայ մարդուց, համարեա ոչնչով: Ուսուցչին յանձնարարուած է որոշ գործեր կատարել. նա պէտք է մի կամ մի քանի օտար հոգիների մէջ վերաստեղծէ այն նոր բովանդակութիւնները, որոնց մասին յիշատակում է դպրոցական ծրագիրը: Ուսուցիչը ևս իր կողման գործնականին անցնելիս լրջօրէն մտածում է այն հարցի մասին, թէ ինչպէս դասաւորէ, կարգաւորէ իր աշխատանքները, որպէս զի նրանք դրական հետեանքներ ծնեն: Ամեն անգամ այդպիսի խնդիրների առաջ կանգնելիս ուսուցիչը չի կարող զանազանազոյն եղանակներով դեկավարուել, նա անպայման պէտք է իր համար մնայուն, հաստատ ձևեր մշակէ, որպէս զի նիւթերի զարգացումի ժամանակ միակերպ կիրառել կարողանայ: Իսկ այսպիսի աշխատանքը իրենից բնականօրէն ծնում է մեթոդի խնդիրը: Դպրոցական աշխատանքը գոյութիւն ունեցող պարզ աշխատանքներից մէկը չէ, ուստի և նրան մօտենալիս պէտք է կարգաւորեալ և լուրջ ծրագիր ունենալ:

Շատերը անում են, ուսուցանելը մի գեղարուեստական աշխատանք է, նա մեթոդի, օրէնքի չի ենթարկուում, սակայն մոռանում են, որ գեղարուեստական ստեղծագործութիւնը ինքը յառաջանում է որոշ օրէնքների հիման վրայ: Անծրագիր աշխատանքը գեղարուեստի մէջ ևս ոչինչ դրական բան չէ յառաջացնում. ամենամեծ գեղարուեստագէտները եղել են աշխատասէր, որոնող և արտայայտուելու որոշ ձևերի ձգտող անհատներ: Ինական հանճարեղութիւնը դեռ բաւական չէ ինչպէս գործունէութեան բոլոր ձևերի, այնպէս և գեղարուեստի մէջ: Խրատական են Գէօթէի հետեւեալ խօսքերը. «Գեղարուեստը մնում է գեղարուեստ: Ով խորը չի ուսումնասիրել գեղարուեստը, իրաւունք չունի իրեն գեղարուեստագէտ անուանելու: Խորխափելը չի օգնիլ. այստեղ մի լաւ բան անելուց առաջ պէտք է այդ բանը դեռ շատ հաստատ ճանաչել-ուսումնասիրել»: Այս մեծ մարդու կեանքը իր խօսքերի լաւագոյն ապացոյց է: Իւր ամբողջ կեանքում Գէօթէն ուսումնասիրել, հաւաքել, սխտեմի է ենթարկել իր գեղարուեստական գրգիւնները: Ասել, թէ Գէօթէն մեծ գործեր է

ստեղծել միմիայն մոմենտի, անիմացի, ոգևորութեան ազդեցութեան տակ, կլինէր շատ մեծ սխալ: Գէօթէի գեղարուեստական ստեղծագործութեան ձևով են ստեղծուել և ստեղծուում են դեռ գեղարուեստական երկերը, նթէ գեղարուեստական ընդունողական և վերարտադրողական կեանքը ենթակայ է որոշ նորմերի, օրէնքների, ապա ինչո՞ւ ուսուցման գործը չպէտք է նոյնպիսի օրինաւորութեան ենթակայ լինէ. չէ որ ուսուցման նիւթերը և նրանց մշակելու մեթոդներն աւելի են մօտենում գիտութիւններին:

Յայտնի է, որ ուսուցման խնդիրների մեծ մասը վերաբերում են մտապատկերների մշակման. գտնէ այս հարցերի համար անհրաժեշտ են գիտական մեթոդներ: Մտապատկերները և առհասարակ իմացական նիւթերը պարզապէս ենթարկուում են որոշ օրէնքների, ուրեմն և ուսուցման ժամանակ այդպիսի բովանդակութիւնների հետ գործ ունենալիս մեթոդների գործադրութիւնը մի անհրաժեշտութիւն պէտք է որ նկատուէ: Գեղարուեստականութեան վրայ հիմնուող անհատները չեն կարող խուսափել դասաւանդման ընդհանուր ձևեր գտնելու կարիքի գիտակցութիւնից:

Ամեն կողմից պահանջ կայ դասաւանդման հաստատ եղանակներ ձևակերպելու համար, սուբյեկտիւիզմը, մոմենտի և տրամադրութեան իդէալականացումը, հարցի էսթետիկական ըմբռնումները չեն կարող ընդհանուր մեթոդ ունենալու կարիքին որ և է կերպ բաւարարել: Դարեր շարունակ մարդիկ աշխատել են այդ խնդրի շուրջը. իսկ այդ խնդիրը անգործնական և ուտոպիստ մարդոց գանգերից քմահաճօրէն չէ ծնել: Իզուր չէ նոր դարու յայտնի մանկավարժներից մէկը—Կոմենիւսը ասել. «Բոլոր գիտութիւնների, գեղարուեստների և լեզուների համար միմիայն մի բնական մեթոդ կայ»: Նոյն ոգով և նոյն նպատակի համար են աշխատել Պեստալոցցի, Ֆրիօրէլ, Ռուսսօ, Հերբարտ և շատ ուրիշները: Դժուար թէ սրանց աշխատանքը թիւրիմացութիւնների վրայ հիմնուած լինէր: Միշտ էլ որոնումներ են եղել բնական, հաստատ և ընդհանրական մեթոդի կամ մեթոդների համար:

Սակայն մեր պէտք է գտնել այն «բնական մեթոդը», որի մասին խօսում է Կոմենիւսը: Դրա համար մի ճանապարհ կայ միմիայն՝ այդ մեր հոգեկան կեանքի ուսումնասիրութիւնն է: Պէտք է քննենք, հետազօտենք հոգին, որպէս զի այնուհետև մեզ համար դէպի այդ կեանքը անցման ճանապարհներ բացուին: Ուսուցանելու ժամանակ ուսուցչին յանձնարարուած է մշակել և մատչելի դարձնել երեխաների համար դպրոցական ծրագրի պահանջած նիւթերը: Այդ նիւթերը, ինչպէս յայտնի է, գլխաւորապէս վերաբերում են մեր հոգու իմացական—մտապատկերային կեանքին:

Ուսուցիչը երևք պարտականութիւն ունի. նախ ինքը լաւ իւրացնում է դասաւանդելիք նիւթերը, յետոյ պարզ գիտակցում է, թէ այդ նիւթերը գիտութեան որ մեթոդներով են մշակուելու և ապա հաստատապէս ծրագրում է, թէ այդ նիւթերը և մեթոդները ինչպէս յարմարեցնէ երեխաների հոգեկան կարիքներին և կարողութիւններին: Այս բոլոր պարտականութիւնները ի կատար ածումը հիմնուած է հոգեկան կեանքի ճանաչման վրայ: Ամբողջ խնդիրը հոգեկանին է վերաբերում, ուստի կայուն մեթոդ ունենալու հնարաւորութեան և կամ անհնարութեան հարցը հոգեկանի հետ է կապուած:

Գիտութիւնը երբ նոր շրջանի մէջ մտաւ, նրա քննութեան առաջնակարգ խնդիրներից մէկը դարձաւ այն հարցը, թէ հոգեկան և ֆիզիքական աշխարհների երևոյթների մէջ պատահականը և օրինականը ինչ դեր ունին: Օրինականութեան և օրէնքների նոյնութեան գաղափարը նախ հող բռնեց բնագիտութեան մէջ. արտաքին աշխարհում պատահականութիւն չկայ. պատճառի և հետևանքի շղթաները տարածուած են բնութեան բոլոր մասերում: Այդ շղթաների մէջ գործող սկզբունքները նոյն են ամեն տեղ: Կարգաւորուած և օրինաւորուած է բնութիւնը:

Այս տեսակէտը նոյն հեշտութեամբ հող շրոնեց հոգեկան կեանքի ուսուսմասիրութիւնների ժամանակ: Մարդ չէր կարողանում հեշտութեամբ հաշտուել այն մտքի հետ, որ հողին, որի բովանդակութիւնները մշտապէս յորձանքի, փոփոխութիւնների մէջ են, կարող է այնպիսի կուռ օրինաւորութեան ենթակայ լինել, ինչպէս արտաքին աշխարհը: Չէ որ մտապատկերները առերևոյթօրէն առանց պատճառի են արթնանում մեր գիտակցութեան մէջ և նոյն եղանակով կորչում. չէ որ մեր կամքի վճիռների մեծ մասը ազատ է լինում, այսինքն առանց արտաքին ճնշումների, միթէ՞ հնարաւոր է, որ հոգեկան կեանքը այն սկզբունքների վրայ հիմնուած լինի, որոնք արտաքին աշխարհի հիմքն են կազմում: Մակայն ստորճանաբար զարգացող միտքը սկսեց համոզուել, որ հոգեկան կեանքը որքան էլ տարբեր է մարմնականից, բայց և այնպէս հիմնական մի քանի յատկութիւնների և մասնաւանդ գործողութեան ձևերի մէջ նման է նրան: Հոգեկան կեանքի վրայ ևս իշխում է օրէնքը, գործողութեան ընդհանուր եղանակը, որը բոլորի մօտ էլ միևնոյնն է: Հզայութիւնները, ըմբռնութիւնները տեղի են ունենում բոլորի մօտ էլ նոյն եղանակով. մտապատկերները իրար կապակցում են և վերջիշում նոյնպէս ընդհանուր արժէք ունեցող օրէնքներով: Կամքի զարգացումը և արտայայտութեան ձևերը անքննելի երևոյթներ չեն, այլ կարելի է բոլորի մօտ գործողութեան նման կողմեր ցոյց տալ: Հողին բոլորի մօտ էլ զար-

գանում է նոյն Ֆաղերով, սկսում է պարզ և անկատար արտա-  
յայտութիւններից և աստիճանաբար բարձրանում է դէպի զար-  
գացած ձևերը: Այդ աստիճանները այնպէս են պարզ իրարից զա-  
նազանում, որ կարելի է նրանց տա՛րբեր անունների տակ դնել:

Հոգին նոր նիւթեր որոնելիս և ուսումնասիրելիս գործում է  
նոյնպէս մնայուն և ընդհանուր ձևերով. մտքի աշխատանքը օ-  
րէնքների է ենթակայ. երբ բնագէտը մի կենդանի, մի բոյս կամ  
մի հանք է ուսումնասիրում, այդ գործի ժամանակ որոշ մեթոդ-  
ներ է գործի դնում. նա քայքայում կամ համադրում է նիւթը,  
նիւթի որոշ մասերը չեզոքացնում, հեռացնում է, որոշ մասերը  
առանձնապէս շեշտում և կամ աշխատում է նիւթերի մէջ օրինա-  
կանը և ընդհանուրը գտնել: Այս բոլորը մտքի գործունէութիան  
ձևեր են, որոնք մնայուն են և յատուկ բոլոր մարդոց և բոլոր  
տարիքներին: Այս բոլորից կզրակացնում ենք. հոգու թէ ընդու-  
նած նիւթերը և թէ նոր հետազօտութիւններ կատարելու ձևերը  
անհանազան արժէք չունին, այլ ընդհանուր են և օբյեկտիւ:

Ահա այս բոլորից յետոյ միայն պարզում է, թէ ինչու կո-  
մենիւսը, Պետտալոցցին և շատ ուրիշները հնարաւոր և հիմնա-  
կան էին համարում դասաւանդութեան ընդհանուր մեթոդներ ու-  
նենալու խնդիրը: Հոգու օրինաւորութիւնը թոյլ է տալիս օբյեկ-  
տի մեթոդ ունենալու մասին մտածել: Պէտք է քննել, ուսումնա-  
սիրել հոգու օրինական կեանքը, նրա ընդունողական և վերար-  
տադրողական կողմի օրինաւոր և մշտանման արտայայտութիւն-  
ները, մտքի գործունէութեան օրէնքները և այդ բոլորից յետոյ  
կազմել դիզակարիկական գործողութիւնների մի փունջ: Ընդհանուր  
մեթոդ ունենալու պահանջը այդպիսով հնարաւոր է դառնում:

Զգայական-հայեցողական և վերացական նիւթերը չի կա-  
րելի մշակել աշակերտների համար այնպէս, ինչպէս ցանկանում է  
ամեն մէկը ըստ իր արամադրութիւնների. բոլորն էլ այդ նիւ-  
թերին մօտենալիս պէտք է գիտական նոյն մեթոդները ունենան  
և այդ մեթոդներով վերլուծեն և համադրեն այդ նիւթերը: Այդտեղ  
արդէն անձնական քմահաճոյքը դեր չունի. ուսուցման գործու-  
նէութիւնը այսպէս թէ այնպէս, գիտակից թէ անգիտակից են-  
թարկում է որոշ մեթոդների, որոնք պարտադիր են բոլոր ուսու-  
ցիչների համար: Ահա այս հիման վրայ պնդում ենք, որ «բնական  
մեթոդ» ունենալու խնդիրը անմիտ մի ուսուցիչի չէ:

Երբ գտնուած է ընդհանուր մեթոդը, այն դէպքում ուսուցիչ-  
ների ներդաշնակ աշխատանքը աւելի է հնարաւոր դառնում: Խնդիր-  
ներ կան ուրեմն, որոնց շուրջը դադարում է վէճը. բոլորն էլ նոյն  
ոգով և ձևերով են աշխատում. զանազան ուսուցիչների աշխա-  
տանքները իրար ներդաշնակում են և մի ամբողջութիւն կազմում:

Ինքն ըստ ինքեան պարզ է, թէ մանկավարժական տեսակէտից որքան ցանկալի բան է դպրոցում տեղի ունեցող աշխատանքների ներքին ներդաշնակութիւնը: Այդպիսով շահուում է թէ դպրոցը և թէ աշակերտութիւնը:

Չպէտք է ենթադրել, որ ընդհանուր մեթոդ ունենալու պահանջը և հնարաւորութիւնը ոչնչացնում է ուսուցչի անհատական նախաձեռնութեան ոգին: Ուսուցիչը ընդհանուր մեթոդի դիմաց չի ոչնչացնում իր անկախութիւնը և ենթարկուում հուրօրէն նրան: Նա պարտաւոր է անձամբ փորձել, անձամբ քննել և վերամշակել եղած մեթոդները: Նոյն գիտական տուեալներից դուրս գալով և անկախ փորձեր գործադրելով նա պէտք է վերջի վերջոյ այնպիսի օրյեկտիւ եզրակացութիւնների հասնէ, որոնք պարտադիր կարողանան դառնալ բոլորի համար, իսկ վիճելի հարցերի մասին նա իրաւունք ունի իր զուտ անհատական կարծիքները ունենալու: Բացի այդ հէնց ընդհանուր մեթոդի դիմաց նա էլի պահպանում է իր անկախութիւնը. սակայն մի ուսուցիչ բոլորի համար պարտադիր մեթոդը գործադրելիս ուրիշներին մատեմատիկօրէն ճիշտ չէ նմանուում, այլ նա այդ ընդհանուր մեթոդին մի որոշ գոյն է տալիս, անհատական էլիմենտներ է մտցնում նրա մէջ. ոգևորութիւնը, տրամադրութիւնը, արտայայտութեան եղանակները, մեթոդի պահանջներից մէկին կամ միւսին առաւելութիւն տալը կախուած է ուսուցչի անձնաւորութիւնից, նրա փորձառութիւնից: Այդտեղ արդէն ուսուցչին չի կարող ճնշել որևէ կապանք: Վասնէ այն մեթոդը, որը ճնշում է ուսուցչի անհատական առանձնայատկութիւնները. ուսուցման գործի ժամանակ դրական հետեանքներ են ծնում այն դէպքում, երբ ուսուցիչը գիտական, օրյեկտիւ մեթոդները գործադրում է իր անհատական որոշ կողմերին համապատասխան կերպով: Բացարձակ միօրինակութիւնը ինչպէս ամեն աշխատանքի, այնպէս և դպրոցական պարամոնքների ժամանակ ցանկալի մի երևոյթ չէ նկատուում:

Փակենք այս խնդիրը պատմական մի փոքրիկ ակնարկով: Դասաւանդման տեսութեան գիտական հիմունքների վրայ դրեր շարունակ աշխատել են և աշխատում են դեռ յայտնի մանկավարժներ: Դասաւանդման խնդիրը վերածնութեան դարուց սկսած նոր հիմունքների վրայ է գրուում: Միջին դարերում ուսուցման նիւթն էր խնդիրը: Այն հարցը, թէ այդ նիւթը և նրա մշակման մեթոդները ինչպէս պէտք է յարմարուեն աշակերտների հոգեկան կարիքներին, միանգամայն մոռացութեան էր տրուել: Դրեր շարունակ աճող սերունդը տանջուում էր այդ ոչ հուման վերաբերմունքից: Նոր դարը ազատագրեց անհատին անցեալի կապանքներից. գիտութեան գրադման նիւթը զարձրեց անհատը իր

բազմազան կարիքներով: Երեխան, աշակերտը ևս դարձաւ լուրջ հետաքրքրութեան առարկայ. նրա ներքին բազմակերպ կեանքը, այդ կեանքի արտայայտութիւնները և այդ կեանքի բարելաւութիւնը կենդրոնական հարցերից մէկը դարձաւ: Որովհետեւ վերածնութեան և նրան յաջորդող դարերը չկարողացան ներկային համապատասխան գիտական մեթոդներով ուսումնասիրել երեխայի հոգին, ուստի և պատմութեան այդ շրջանը չկարողացաւ մարդկութեանը տալ գիշակտիկական հարցերի լաւագոյն լուսարանութիւնը: Հոգեկան գիտութիւնների դարգացման միջոցաւ միայն ուսուցման տեսութիւնը որոշ ձեւակերպման ենթարկուեց: Կոմենիուսից, Ռուսօյից, Պեստալոցցուց սկսուեւ են այդ ուղղութեամբ թոյլ փորձեր: Հերքարտը եղած տրամագրութիւններին աւելի լուրջ կերպարանք է տալիս. մանկավարժական խնդիրներից կազմուեւ մի կուռ սիստեմ: Նրա աշակերտները և հետետոյները աւելի ուշալ և գործնական շէնքեր են կառուցուեւ Հերքարտի տուած հիմունքների վրայ: Այդ ուղղութեամբ աշխատողներից աչքի ընկաւ Գերմանիայում 19-րդ դարում Տ. Յիլլէրը:

Ո՞րն է Հերքարտ-Յիլլէրեան գեղակտիկական կարծիքների կորիզը: Պատասխանը շատ պարզ է՝ հոգեբանութիւնը: Հոգին իր երևոյթներով և իր դարգացման պատկերով օրինակելի է ուսուցման տեսութեան վերաբերող հարցերի համար: Յիլլէրը այդ խնդիրը այսպէս է լուսարանուեւ. մեր հոգին նախ և առաջ լցուեւ է զգայական կոնկրետ ըմբռնումներով. այդ ըմբռնումների ժամանակ հին և նոր մտապատկերների միացումներ է կատարուեւ. ուրեմն մի նոր ըմբռնուեւ կազմուեւ է զգայական նոր գրգիռներից և այդ գրգիռներին համապատասխան հին մտապատկերների էլեմենտներից: Հոգին երբ բաւականաչափ լցուեւ է այդպիսի կոնկրետ բովանդակութիւններով, այնուհետեւ սկսուեւ է մի այլ աշխատանք. նրա մէջ եղող նոյննման մտապատկերներից աստիճանաբար կազմուեւ են վերացական գաղափարներ, գատողութիւններ և օրէնքներ: Այսպէս ուրեմն հոգին ձգտուեւ է զգայական-ուշալ բովանդակութիւններից դէպի վերացական իմացութիւնները: Սակայն այստեղ կանգ չի առնուեւ մեր հոգու գործունէութեան ընթացքը, նա կատարուեւ է մի այլ աստիճան ևս. նորից հոգին իր մէջ է ընդունուեւ զգայական ըմբռնումներ, որոնք սակայն ցրիւ չեն մնուեւ, այլ յարաբերութեան մէջ են մտնուեւ եղած գաղափարների և օրէնքների հետ: Այսպիսով հոգին գաղափարներից նորից է իջնուեւ դէպի զգայականը և մասնակին: Յիլլէրը իր դեղակտիկական ձեւական աստիճանները հիմնել է հոգեկան այս օրէնքների վրայ:

Այս աստիճանները իրենց յայտնուելու սկզբնական շրջանում

մեծ աղմուկ հանեցին, շատ շատերը դարձան այդ աստիճանների թունդ պաշտպանները: Հերբարտ-Ցիլլէրեան մանկավարժական կազմակերպութիւնները դարձան ձեական աստիճանների տարածման օրգաններ: Մի ժամարակ կար, որ նա տիրապետող ուղղութիւններից ամենաուժեղն էր:

Ցիլլէրեան՝ ուղղութեան սկզբնաւորութեան ժամանակ ընդամութեան թոյլ ձայներ լսուեցին զանազան կողմերից, սակայն այդ ազդարարումները առանց հետեանքի մնացին, մինչև որ 19-րդ դարու վերջին և մեր դարու առաջին տասնամեակներում հակա Հերբարտ-Ցիլլէրեան շարժումը մի պատկառելի ուժ դարձաւ: Չեական աստիճանները, կարալի է ասել, իր անկման զառիվայրի վրայ է այժմ: Այդ հակահոսանքի արտայայտութիւններից մէկն է նաև անցեալ տարի լոյս տեսած իմ աշխատութիւնը, «Քննադատութիւն Ցիլլէրի ձեական աստիճանների»: Ընթերցողը այնտեղ կգտնի Ցիլլէրեան և ուրիշ գիղակտիկական տեսութիւնների նկարագիրը և առաջին տեսութեան մանրամասն քննադատութիւնը: Այդ աշխատութեան նպատակն է, ցոյց տալ, որ Ցիլլէրի աստիճանները չեն կարող բաւարարել նոր գիղակտիկային, որի համար անհրաժեշտ է նոր հիմունքներ որոնել:

**Գ. Էդիլեան**

